ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

19.05.2014թ.
218-ի 9

ՀՀ էկոնոմիկայի նախարար
պարոն Կարեն Ճշմարիտյանին

## Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ճշմարիտյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Իրականացվու՞մ է արդյոք ՀՀ էկոնոմիկայի նախարարության ստացած էլեկտրոնային հարցումների հաշվառում,
2. Եթե այո, ապա քանի՞ էլեկտրոնայն հարցում է ստացել նախարարությունը 2013թ.-ին:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Սույն հարցման կարգավիճակին կարող եք առցանց հետևել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի www.givemeinfo.am կայքում՝ հետևյալ հղմամբ՝ http://givemeinfo.am/hy/case/1368/:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան